

ԲԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկան վեցամսայ	7 "
Արսասահմանի համար սարեկան	15 ֆր.
վեցամսայ	8 "
Աւերկայի համար սարեկան	3 ֆր.
վեցամսայ	1.50 "

Ծանուցումն սուրբ ու ուսման երեսիկի համար 40 սանթիմ իսկ վերջին երեսիկի համար 20 սանթիմ է. երեսիկն աւելի անգամներու համար 20 0/0 զեղջ կը լայն:

Վառնայի համար ձեռքի 40 սանթիմ է

ՇԱՐՈՒ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՈՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԻՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ ВАНАРЯНЪ

Նախկին և նորա ղեկի խմբագրութեան հասցեիկն

Редакция на вѣстникъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjoum" Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ Արսասահմանի համար ձեռքի 20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և լեզուի

ՇԱՐՈՒՄԻ ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆԵՆԻՎ ՎՃԱՐԷ

Ս. ԳՍԲՐԻԵԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ ԽՈՒՈՐԸԱԼ ՍՕՅԻՍ ԲԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնելի փափաքողները կրնան իրեն դիմել Չար-Պորիս փողոց Վառնա

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մեր անցեալ թիւին մէջ ուսուցիչներու կոչին վրայ խօսելով, շեշտած էինք թէ, ամէն բանէ առաջ անհրաժեշտ է որ բոլոր ուսուցիչները իրարու հանդէպ համբարաշխութիւն տածեն: Երկրորդ կարեւոր հարց մը որ կրկին մեզի կը ներկայանայ այս առթիւ, կրթական լաւ ու միօրինակ ծրագրի մը պատրաստութեան հարցն է:

Աւելորդ է անգամ մըն ալ կրկնել, ինչ որ պուլկարահայ մամուլը հազար անգամ ծեծած է, մատնանշելով անկիրպարան, աններգաչնակ, տեղական պայմաններուն ու պէտքերուն անհասարակ արտադրութեան ծրագրերուն ապարդիւնութիւնը, և միանգամայն փրօսը որ գէշ կազմուած ծրագրի մը կը պատճառէ ամբողջ սերունդներու դաստիարակութիւնը փճացնելով:

Եւ սակայն, հակառակ որ այս պարագան կատարեալ ճշմարտութիւն մը ըլլայ, նոյնիսկ ուսուցիչներու, հոգաբարձուներու կամ թաղականներու խոստովանութեամբ, մինչեւ այսօր անոնց մէջ ոչ մէկը լրջօրէն չլանք ըրած է որոշ ուղղութեամբ վերջնականապէս պատրաստուած ծրագրի մը ունենալու, որ անփոփոխ շարունակուի, ինչ ալ ըլլայ ուսուցչական մարմին կազմութիւնը կամ իրարու յաջորդող հոգաբարձութիւնները: Ամէնքն ալ կը պահանջեն որ մէկը նախաձեռնարկ ըլլայ, որ ամէնքը մէկտեղ հաւաքուին ու մէկ անգամէն ու

րոշեն ամբողջ պուլկարահայ վարժարանները յեղաշրջել: Ասիկա սխալ ուղղութիւն է, եթէ ուսուցիչները կսպասեն որ ամբողջ վարժարանները միաժամանակ պիտի բարեփոխուին, ատիկա ցնորք մըն է, ու միանգամայն անշարժութեան կը դատապարտէ զիրենք: Ընդհակառակը, կը բաւէ որ քաղաքի մը հոգաբարձութիւնը, ուսուցչական մարմինն հետ, վերջնական ծրագրի մը պատրաստելէ ետքը, օրինակի համար պուլկար նախակրթարանի ծրագրին հետեւողութեամբ, պայն վաւերացնէ, ու արձանագրէ իբր մշտական ծրագրի վարժարանի, որուն գործադրութիւնը պարտագրէ բոլոր ուսուցչական խումբերուն: Երբ անգամ մը այս տեսակ որոշում մը կը տրուի, միեւնոյն ատեն մասամբ կը պակասի ուսուցիչներու մշտական փոփոխութեանց հասուցած փրօսը: Ինչ որ միւս քաղաքները, հետզհետէ պիտի հետեւին նախաձեռնողին օրինակին և մենք պիտի տեսնենք որ ամէն հայ վարժարան գոնէ իրեն որոշ ծրագրի պիտի ունենայ որուն գործադրութիւնը պարտաւորիչ պիտի դառնայ բոլոր ուսուցիչներուն համար: Ու, երբ բոլորն ալ հաւասարապէս պուլկարական ծրագրին հետեւին, պարզ է որ, առանց մեծադորդ համագումարներու, ծրագրական միութիւնը ինքնին գործադրուած պիտի ըլլար:

Յուսալի է որ Վառնան տլլելու չի տատանի այս կարեւոր պէտքը լրացնելու, և առաջին վերջնական ծրագրի պատրաստողը կը հանդիսանայ: Այսպէս սով դաստիարակութեան գործին ամենագծուարին արգելքներէն մին վերցուցած պիտի ըլլայ իր առջեւէն և զոհուցութիւնները որ տարուէ տարի այնքան ճիշդօրով ի գլուխ կելլեն, պարագայ տեղի չի պիտի ըլլան բոլորովին: Հոգաբարձութեան վրայ պարտք կը ծանրանայ օր առաջ, իր ուսուցչական

խումբին հետ, այս կարեւոր պէտքը ի գլուխ հանելու:

ՇԱՅԱՊ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՍՊԱՌԱԶԻՆՈՒՄՆԵՐԸ

Բոլոր կառավարութիւնները մեծադորդ կաղաղակեն թէ միմիայն միջազգային, ապահովութիւն կոչուող անգին բարիքը ձեռք բերելու համար է որ կը զինուին: Սակայն սեպն է քննելու թէ մինչեւ հիմայ ի գործ դրուած եղանակները ճշմարտապէս այդ նպատակը ձեռք բերելու կը ծառայեն թէ ոչ: Կարելի է սպասուողներու մոլ ասպնոցութիւնն ձեռք բերել Բնականաբար ոչ, և ասիկայ ապացուցանելէ աւելի դիւրին բան չիկայ, Բայց նոյն իսկ ընդունելով որ սպասուողները ապահովութիւն կը բերէ, դարձեալ պէտք է քննել թէ մեր հետապնդած նպատակը ձեռք բերելու ծառայող մանալաւ միջոցը այդ է: Եթէ սպասուողները ապահովութիւն կարենայ տալ, այդ ապահովութիւնը պէտք էր համեմատական ըլլար իրեն: Ընդհակառակը անապահովութիւնն է որ կաւելնայ սպասուողներուն աւելնալովը: 1870-էն առաջ եւրոպայի մէջ երկու միլիոն չորս միլիոնէն աւելի կայ ուրեմն, հիմայ երկու անգամ աւելի ըլլալու էր ապահովութիւնը: Արդ, իրողութիւնը այսպէս չէ, քանի որ կառավարութիւնները ինքզինքնին անկարող կը յայտարարեն ապահովութիւնը երաշխաւորելու և ամէն օր զինուորներու յաւելում կը պահանջեն:

Այս անապահովութեան պատճառներէն մին այն է որ, սպասուողները զուգահեռաբար կաւելնան, երբ երկու աէրութիւններ հաւասար ուժեր ունին, աստիճան մը կրնանք ապահովութիւն կայ ըսել: Բայց եթէ մին իր զօրքերուն թիւը 200,000ի կը բարձրացնէ, միւսն ալ իսկոյն կը հետեւի անոր Արդ, զօրքերու թիւին կրկնուած հիւլէի մը չափ անգամ աւելցուցած չեղաւ հանրային ապահովութիւնը: Բայց սակէ կը հետեւի որ, եթէ երկու աէրութիւններն ալ իրենց զինուորներուն թիւը զեռօր հաւասարեցնեն, իրենց ապահովութիւնը ճիշտ նոյնը պիտի մնայ: Հետեւաբար, ուժերու հաւասարու-

թիւնն է որ ապահովութիւն կուտայ և ոչ թէ սպասուողներու: Երբ այդ հաւասարութիւնը դադրի, անապահովութիւնն ալ կը սկսի:

Սպասուողներու յաւելումները շատ կերպերով տեղի կուենան, նախ բնական կերպով: Այսպէս Գերմանիան, 1870 ին 37 միլիոն բնակիչ ունէր և հիմայ 60 միլիոն ունի: Հետեւաբար իր զինուորներուն թիւը ինքնին աւելցած է, որով Ֆրանսայի համար աւելի մեծ անապահովութիւն մը ստեղծուած:

Երկրորդ, զինուորական յաւելումը կը կատարուի կառավարութեան մը կանխամտածութեամբ: Այսպէս, օրինակ, Բրուսիան, 1858 ին, Կիլեով Ա. ի օրով, և չաբօնիան 1890 ին Մուցահիթօ Ա. ի օրով:

Երրորդ, կառավարութիւն մը, բացի մարդոց թիւին յաւելումէն, կրնայ նաև անոնց յարձակողական ուժը աւելցնել զօրծիքներու կատարելագործումով: Կը պնդեն թէ, եթէ վերջերս Գերմանիան Ֆրանսայի դէմ չի պատերազմեցաւ պատճառ այն է որ Ֆրանսան հիմայ լաւագոյն թնդանօթներ ունի: Ուրեմն, երբ կառավարութիւն մը իր բանակին, զօրծիքները կը կատարելագործէ, միւսին ապահովութիւնը կը նուազի: Ամենէն ահեղ նաւատորմիցը, որ 18,000 թնդանց զբաւաւորներէ կը բաղկանայ, կրնայ ոչնչացուիլ կատարելագործուած ընդձովեայի մը միջոցաւ: Ուր է մեթիթարիզմի կամ մատինիզմի ապահովութիւնը: Բացարձակ ցնորք մըն է ան:

(Շարունակելի)

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՇՈՒՇԻ, մարտի 22 ին

Աւելորդ չենք համարում հազորքի սրանով մարտի 19 ին Աղղամու թուրքերի կողմից տեղի ունեցած ճանապարհորդ հայերի վրայ յարձակման մանրամասնութիւնը:

Մարտի 19 ին Աղղամի թուրքերին լուր է հասնում, որ իբր թէ Ասկարանում հայերը գերել են երկու թուրքը:

Մի աննշան պատրուակի պատրաստ աղղամի թուրքերը նոյն այդ օրը յարձակվում են Եւլախից Եուշի եկող զինվորանների և Եուշուց Եւլախ գնացող երեք ֆուրգոնների վրայ, որոնց միջի ուղեւորները հայեր են լինում—թալանելու և սպանելու դի-

տաւորութեամբ :
Յարձակվող թուրքերը զիջիմանս-
ները և ֆուրգօնները քել են տալիս
դէպի Աղզամի քարվանսարաներից
մէկը, այդտեղ իրանց մտադրու-

Կանանց և երիտասարդ սիրտ մոր-
մոքող լացը, աղամարդկանց աղա-
չանք-պաղատանքը չեն կարողանում
յետ կանցնել քաղանացած թուրքե-
րին իրանց անխիղճ մտադրութիւնից

Այդ իսկ ընկերներն տեղեկութիւն
ստանալով կողակները վրա են հաս-
նում այդ անմեղ զոհերին ազատելու
համար :

Աղզից թուրքերը դիմադրում են
կողակներին քարերով, ու այնուհե-
տեւ կամենում են զէնքի զիմել :
Այդ վայրկեանում որոտում են կո-
զակները հրացանները...

Ականատես ոուս զինուորի ասելով,
թուրքերից սպանվում են 10 հոգի և
ծանր վիրատուրվում 9 հոգի :

Կողակները ճանապարհորդ հայե-
րին տանում են իրանց մօտ, գիշերը
պահում և միւս օրն առաւօտեան ա-
պահով ուղարկում Շուշի :

Սելախ գնացողներից մի քանիսը
ուղարկում են Սելախ :

Մոռացայ ասել, որ մինչև ազա-
տարար կողակների վրա հասնելը,
թուրքերը կարողացածին չափ թա-
լանում են հայերի իրեղէններից մի
մասը :

Յարձակման ենթարկված այդ ճա-
նապարհորդները քանի օր ապուշի
պէս էին, այնպէս էր տակաւ հրկիւ-
զը նրանց սարսփեցրել...

Հայերի որոշմամբ յանձնարարված
է Շուշու քաղաքագլխին հայերի
կողմից շնորհակալութիւն յայտնել
կողակներին և Ձատկի տօներին նը-
րանց մի բանով հիւրասիրել :

Աղզամի թուրքերը այդ դէպքից
յետոյ հեռագրով հաղորդել էին Շու-
շեցի թուրքերին, որ այդ ամենը

թիւրիմացութիւնից է առաջացել...
Հաւատում ենք... ՍՈՒՐԷՆ

«Մշակ» լրագիրը արտասպէս, որ
Ջամիլի (Ննգի) գիւղում երեւան են
հանված անընթաց թղթեր. դիմախոս,
ուղեբեր և սպարան : Իրողութիւնն
այս է : Գիշերի Հանէսանց իշխանը իր
ազգականներով դժգոհ էր Հայ Դաշ-
նակցութեան անդամներից և միջոց-
ներ էր որոնում նրանց շարութիւն
անելու : Դաշնակցութեան մի քանի
անդամները, երբ Ննգի (Ջամիլի)
գիւղում են լինում, իշխանը գալիս
է ինանքեղի, մատնում է նրանց, որ
նրանք ժողով ունին և 100 կազակ
ստանալով գալիս է Ննգի նրանց
բռնելու : Նա թթանը մտնելով Ննգի՝
չըջապատում է այն տունը, որտեղ
պէտք է լինէին անդամները, բայց
այդ տունը ոչ մի օտարական չը
գտնվելով՝ ձերբակալվում է տնատէրը :
Ուղարկում են ամեն մի քանի ու
պուճախ և մի գոմում զտնում են մի
ծի, թամբին մի խուրջին թղթերով
լիքը. երբ էլ ուղեբեր Այդ խուր-
ջինը բերվում է ինանքեղի ձերբա-
կալված մարդու հետ թերում են և
դիշերի Հանէսանց իշխանին : Գննու-
թիւն է սկսվում Հանէսանց իշխանը
բացատրութիւն է տալիս. նրա բա-
ցատրութիւնը հետաքրքրել է շաաե-
րին : Նրան խօսեցրել են գնեցրալ
Գորջապով և այլ շատ մարդիկ, ա-
պա Գանձակի յայտնան նահանգա-
պետը : Հանէսանց իշխանին, որ
պահվում էր ինանքեղի զօրանցում,
նահանգապետը իրան հետ տարաւ,
երեւի հայկական այդ աիպարին ցոյց
տալու աշխարհին : Այն խուրջինը, որ
ձերբակալված էր Ննգի գիւղում և
պահվում էր տեղի ոտարկանութեան
մէջ, ծառայի հետ աներեւոյթացաւ :
Այս հանգամանքը մեծ իրարանցում
ձգեց ազմինիստրացիայի շրջանում :
Նրա երկրորդ օրը եկան գաւառու-
պետը, նահանգապետը, դատախազը
և քննիչը : Գննութիւն է կատար-
վում : Պրիտուալին ենթարկել են մեծ
պատասխանատուութեան :

ՀԱՅ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ
ՓՈՒՍԱՐՔԱՅԻ ՄՕՏ

Երէկ, մարտի 28-ին, ցերեկվայ
ժամի 3-ին, հայ պատգամաւորու-

թիւնը ներկայացաւ կովկասեան Փո-
խարդային և զեկուցեց Շուշու և
Գանձակի գաւառների վերջին աղէ-
տալի դէպքերի մասին :

Պատգամաւորութիւնը կազմված էր
նախկին հայ-թուրքական պատգա-
մաւորների երեք անդամներից : Դր
բանք էին՝ «Մշակ» խմբագիր Ա.
Գալանթար, երգուեալ հաւատարմա-
տար Ս. Յարութիւնեան և բժիշկ
Ա. Սատրեան :

Պէտք է նկատել, որ մի օր առաջ
Փոխարդային ուղարկված էին թիֆ-
լիսի թեմակալ առաջնորդի և հայ
պատգամաւորների կողմից այն հե-
ռագիրներին պատճէնները, որոնք
ստացվել էին Շուշու առաջնորդ Աշոտ
եպիսկոպոսի կողմից : Այնպէս որ
Փոխարդան մասամբ ծանօթ էր զե-
կուցման առարկայի հետ :

Պատգամաւորութիւնը իր կողմից
մանրամասն նկարագրեց Շուշու գա-
ւառում կատարվող քառմեղի դէպ-
քերը, առաջ բերելով թէ հեռագրի-
ներով և նամակներով ստացած տե-
ղեկութիւնները և թէ Շուշուց եկած
ակնատեսների վկայութիւնները :

Փոխարդայ. — Ես ծանօթացայ
երկվայ հեռագիրներին հետ և ես իմ
կողմից հեռագրեցի գեներալ Նահան-
դապետ Այլֆտանին, որ նա գնայ
տեղիտեղը քննէ գործը եւ ինձ գե-
կուցանէ : Աշոտ եպիսկոպոսի տուած
տեղեկութիւնները կարօտ են ստու-
գութեան, որը և յանձնված է կա-
տարելու անմիջապէս :

Պատգամաւորներ. — Ան-
հրաժեշտ է, որ քննութիւնը կատա-
րէր մի յատուկ անձ ուղարկված
թիֆլիսից. նա աւելի անկախ կը լի-
նէր, Բացի այդ, մեղադրանք անծերի
այսինքն գաւառապետ Յրէյիլիսի,
հաշտարար միջնորդ Երմոլայի և
կոմանդիր Հայրիկի ներկայութիւնը
կը խանդարէ քննութեան տղոյ ըն-
թացքը, որովհետեւ ազգաբնակու-
թիւնը կը վախենայ բացել ամեն
բան, երկիւղ կրելով նոր պատուհա-
սներից : Օրինակ, կարելի էր բարձր
քննիչի պաշտօնով ուղարկել Փոխար-
քայի խորհրդի անդամ Ջուլիպովին :

Փոխարդայ. — Ես ճանաչում
եմ Այլֆտանին իբրեւ շիտակ մարդու
և հաւատում եմ, որ նա ամեն բան
ճշտութեամբ կը զեկուցանէ :

Պատգամաւորներ. — Թոյլ
տուէք կարգաւ այն նոր հեռագիրը,
որ մենք ստացել ենք Աշոտ եպիս-

կոպոսից, որին մենք երէկ դիմե-
ցինք, առաջարկելով աւել ճիշտ ան-
զեկութիւններ Ձեզ ներկայացնելու
համար :

Կարգացվում է Աշոտ եպիսկոպոսի
այն հեռագիրը, որ նա տուել է մարտի
28-ին և որը տպված է «Մշակ» յայ-
տօրվայ համարում :

Փոխարդայ. — Ես իսկոյն կը
հաղորդեմ Այլֆտանին այս հեռագրի
բովանդակութիւնը և կը պահանջեմ
բացատրութիւն :

Փոխարդան մակագրեց հեռագրի
վրա հետեւեալը՝ կատարել տնտապազ
քննութիւն, հեռացնելով քննու-
թեան ժամանակ գաւառապետին, հաշ-
տարար միջնորդին, հարկուեակի կօ-
մանդիրին և բոլոր մասնակից ան-
ձերին և եթէ յայտնվեն մերկացնող
հանգամանքներ՝ ենթարկել նրանց
դատի :

Պատգամաւորներ. — Ան-
հրաժեշտ է որ քննութեան հետե-
ւանքները հրատարակվեն ի գիտու-
թիւն հասարակութեան :

Փոխարդայ. — Կը հրատարակ-
վեն :

Պատգամաւորներ. — Մենք
մեծ նշանակութիւն ենք տալիս այդ
քննութեանը, որովհետեւ դա առա-
ջին խոշոր դէպքերից մէկն է և կա-
րող է ազդեցութիւն ունենալ միւս-
ների վրա : Մենք անհրաժեշտ ենք
համարում անկախ քննիչը լինելը
կամ հասարակութեան ներկայացու-
ցիչների մասնակցութիւնը քննու-
թեան ժամանակ :

Փոխարդայ. — Ես դժուարա-
նում եմ Ջուլիպովին ուղարկել, ո-
րովհետեւ նա իր սեփական զօրծերն
ունի, նրան կը խանգարեն և ընտա-
նեկան պատճառները, որովհետեւ նա
հիւանդ ունի իր տանը. և և բացի
այդ ես կասկած չունեմ՝ Այլֆտանի
վրա :

Պատգամաւորներ. — Կարելի
էր ուղարկել հայ-թուրքական խորհր-
դակցութեան նախագահ Վէյդեմ Բա-
ուսին և երկու անդամի, որոնցից
մէկը կը լինէր հայ, միւսը թուրք :

Փոխարդայ. — Այդ հարցը ես
ուշադրութեան կտանեմ և կը քննեմ :

Պատգամաւորներ. — Անհրա-
ժեշտ է այժմին իսկ ազդարեցնել բո-
լոր ակտիւ գործողութիւնները և
հանդարտացնել ժողովրդի յուզված
մտքերը : Պէտք է կանգնեցնել զինա-
թափութիւնը, որի պատճառով մա-

ԱՊՊԷ ԺԻԼ
ՄԱՍ Բ
(Հատուածներ)
Տարօրինակ գերագրգռութեան մը
զոհ, զէջ գիշեր մը անցուց : Ջեր-
մը սաստիկացաւ : Իր սիրտը զսպա-
նակը կտորած ժամացոյցի մը պէս
կը բարախէր. գառանցանքը իր
նայուածքին մէջ սոսկալի խելագա-
րութիւն մը դրոշմած էր, իր շարժ-
ուածքին մէջ՝ սպանութեան բանդա-
պուշանք մը : Հայրս որ կը հսկէր
անոր վրայ, շատ դժուարութիւն կը
քաշէր զայն զսպելու համար : Կուզէր
ոտքի ելլել, վայրենի աղաղակ-
ներ կարձակէր, երեւակայական ան-
ձի մը վրայ յարձակելու կը պատ-
րաստուէր ու անոր կը հետեւէր ան-
ներգաչանկ շարժումներով վայրկեա-
նէ վայրկեան անող կատաղութեամբ

մը : Կը կարծէր թէ քահանան ե-
կած է :
— Աւագակ, հոգիս կը թակարդես,
կոռնար. չես ուզեր որ իբրեւ մէջ
ցանցնուի, այնպէս չէ՞, զող... ու
երջանիկ ըլլայ... բայց չի պիտի կրու-
նաս ձեռք անցնել... ահա հոս է հոս
է հոգիս (կողորդը կը գուցնէր զայն
սեղմելով), հոս է. գաւ կուտայ ին-
ձի, կը խեղդէ՞ զի, և սակայն չի
պիտի թքնեմ, կորսուէ՞, կորսուէ՞...
Ու մինչդեռ հայրս անոր վրայ հա-
կած, զայն հանդարտեցնել կը ջա-
նար.
— Վռնտէ՛, կը հրամայէր, տես
ք օրն ի շներուն փակեր է, իր սե-
թեւերը տարածած : Ա՛հ, կը թո՞ի
կոր. կը թո՞ի կոր. ահաւասիկ...
սպանէ՛... Ա՛հ, սպանէ՛ կրեմ...
Տես... անկողնիս տակ պահուեցաւ,
անկողնիս վեր կը վերցնէ... կը տա-
նի կոր... սպանէ՛... զեհ, սպանէ՛
անարգ քահանան :

Երբեմն ալ կուլար ու բոլորովին
երկչոտ, կը կծկուէր վերմակին տակ
փոքրիկ տղու մը պէս :
Իր գառանցանքը, ամենագէջ
գիշերներու տանն, շատ անգամ ար-
փական բնոյթ մը կտանէր, սեռա-
յին գրգռում մը տարօրինակ ու վր-
գովիչ ուժգնութեամբ : Անարգ բա-
տեր կարտասանէր, պիղծ արարքներ
կը կատարէր, ու մտրս յանկարծա-
կի յարձակում մը կրելու վախով,
երբէք չէր համարձակուր անոր ան-
կողնին մօտենալ, ուրկէ հազիւ ան-
գամ մը կարողացած էր խոյս տալ :
Արբան մէջքին բռնած էր մօրս, կուպ-
տարար դէպի իրեն քաշելով, ու իր
այրող ու ջերմոտ շուշուով համարյր
մը դրոշմած : Այդ կիրակի օրը, հա-
զիւ կէս ժամ մինակ մնացած էի հէգ
Մատչէնի հետ, երբ արբան, վրա-
յէն վերմակները նետելով՝ յանկարծ
դէմերիս կանգնեցաւ, անարգ կեր-
պարանքով մը. յետոյ, երբ կը ճար-

տարուէինք զայն բռնել, ցատկեց
անկողնէն, ու իր անմիտ ու երկար
սրունքներու վրայ սայթաքելով,
շապիկը վեր սոթտած, փորը մերկ,
գնաց սենեկին մէջ անկիւնը կծկուե-
ցաւ : Վայրագ տեսարան մը պար-
զուեցաւ. անբացատրելի իր սարսա-
փելի զարուարանքով... իր երբեմնի
մեղէն ցանկութիւնները. կը ցայ-
տէին իր բոլոր էութեանէն, ու կը պար-
պէր իր բրակներուն և ձուծին մէջ
դիզուած երվան : Կարծես կրքի փու-
խունքն էր որ միշտ շարժված էր իր
մարմինը : Ուստի ձայներ արձակե-
լով, որոնք պզգալի հետեւեալի մը
մանչիւններ ըլլային կարծես, զա-
զիր պոռնակացու մտերու և զարհուրե-
լի թղթախոհութեան երեւոյթներ կը
կեղծէր. որոնց մէջ սիրոյ գաղափա-
րը կը խառնուէր արբան զաղափա-
րին, ուր գրկասեղմումի կատաղու-
թեան կը բարդուէր սպանութեան
կատաղութիւնը : Ինքզինքը Տիֆե-

սամբ կատարվում են գիւղերի որմ-
րակոծութիւնները եւ բնակիչներին
խուզարկութիւնները. այդ կարեւոր
է եւ այն պատճառով, որ Շուշու
ղէպքերի նման քստմնելի անցքեր
տեղի ունենն եւ Գանձակի գաւառի
չըջանում Գետաչէն գիւղը ուժակոծ-
վել է մի քանի անգամ եւ երկիւղ
կայ որ նոյն վիճակին կենդանի
Բանանց եւ միւս գիւղերը .

Փոխարքայ.— Ես կանեմ կարգադ-
րութիւն դարեցնելու գործողու-
թիւնները, իսկ զինաթափման մա-
սին կը կրկնեմ իմ նախկին կարգադ-
րութիւնները՝ որ չանեն զինաթա-
փութիւն եւ խուզարկութիւն, ի
հարկէ, խուզարկութիւն կը կատար-
ուի միայն այն զէպքում, երբ տե-
ղեկութիւններ ստացված կը լինեն
զէնքի պահեստների մասին :

Պատգամաւորներ.— Մենք հայ
թուրքական խորհրդակցութեան նախ-
կին պատգամաւորներս զգում ենք
մեզ վրա ծանրացած պատասխանա-
տուութիւնք մեր ընտրողների առաջ,
Շուշու եւ Գանձակի նոր զէպքերը
այնքան ծանր են ազգել մեր բոլորի
վրա, որ մեզ մնում է հրաժարվել
այն նոր խորհրդակցութիւնից որի
մէջ մենք այժմ պէտք է մասնակցենք
եթէ տեղական վարչութիւնը կը յա-
րուանակէ այնպիսի գործողութիւն-
ներ, որոնց մասին խօսում են հե-
ռագործները եւ ստացված տեղեկու-
թիւնները: Մինչեւ այժմ մեր խոր-
հրդակցութիւնը չէ հաւաքվել ոչ մէկ
անգամ, իսկ գաւառներում չեն կազ-
մել խորհուրդներ եւ յանձնաժողո-
ւն :

Փոխարքայ.— Իմ գիւնատանը
արդէն պատրաստվում են իղթեր.
Ես կը կարգադրեմ շուտով ուղար-
կել կատար անելու :

Պատգամաւորներ.— Մենք կը ցան-
կայինք որ մեր խորհրդակցութիւնը
կարող լինէր մեր ու ձեր մէջ ուրիշ
միջնորդներ չունենայ :

Փոխարքայ.— Ես պտտաստ եմ
միշտ ընդունելու եւ լսելու ձեզ, իսկ
խորհրդակցութիւնը կարող է սկսել
իր գործունէութիւնը անմիջապէս :

Այնուհետեւ պատգամաւորները
զեկուցին զենեքալ Լեվիցկու անտե-
ղի կարգադրութիւնների, աւերված
գիւղերի դրութեան, հայ ժողովրդի
յուզված դրութեան, տեղական վար-
չութեան անգործունէութեան եւ յան-
ցաւոր անտարբերութեան մասին :

Այցելութիւնը տեւեց ամբողջ մի
ժամ .
Այցելութիւնից պարզվեց հետեւ-
եալը .

1) Հրամայված է զենեքալ Այլփոա
նին գնալ եւ տեղն ու տեղը քննել
Շուշու գաւառի զէպքերը .

2) Նկատի առնել Այլփոա եպիսկո-
պոսի նոր հեռագիրը . քննել գոր-
ծերը, հեռացնելով քննութեան ժա-
մանակ գաւառապետին հայտարար
միջնորդին եւ միւս մասնակի պաշ-
տօնեաներին . եթէ քննութիւնը պար-
զի յանցաւորութիւն, ենթարկել մե-
ղաւորներին դատի .

3) Քննութեան առնել ուղարկելու
Շուշու գաւառը հայ-թուրքական խոր-
հրդակցութեան նախագահին եւ եր-
կու անդամի .

4) Գարեջուրը զինաթափութիւնը
եւ խուզարկութիւնը, բացի այն
զէպքից երբ յայտվել են զէնքի
պահեստներ .

5) Կարգադրել որ տեղական խոր-
հուրդները եւ յանձնաժողովները
սկսեն գործել եւ

6) Հայ-թաթարական խորհրդակ-
ցութեան տալ արտօնութիւն անմի-
ջապէս զեկուցումներ անելու Փոխար-
քային .

«Մշակ»

Տէր Ղեկունի Եղիշի Երեմիայի

ԻՍ ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔԸ
ՀԱՆԴԵՐՁ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲ
Ս Ո Ւ Ր Բ Տ Ե Ղ Ե Ա Ց

Հրագրական կանխահաս նկատողու-
թիւններու հետեւանօք՝ շատ մը
ազգայիններու կողմէ եղած թախան-
ձանաց առջեւ տեղի տալով, անցիւ
Փետրուար ամսուն մէջ սկսուած է
հրատարակութիւնը հանդուցելու Տէր
Ղեկունի Եպիսկոպոս Երեմիայի վե-
րոյշեալ երկասիրութեան, որ 55 է
60 պրակի կրնայ հասնիլ, որոնց վեց
պրակները արդէն հրատարակ ելած
են .

Հանդուցելու Գերապատիւ Հեղինա-
կին գրաւոր յայտնած հաւանութեամբ
ներկայ հրատարակութեան զուտ հա-
տոյթէն, կարեւոր մաս մը ԲԱՐՅՊՈՐ-
ԾԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ պիտի յատ-
կացուի. այդ պատճառաւ յատկապէս
(500) Հինգ ՀԱՐԻԻՐ օրինակ կը

պատրաստուի՝ անոնց վաճառման
արդիւնքը՝ 20, 000 դր. ողջ առ այդ
նպատակ գործածուելու համար .

Արդի պահանջմանց բերմամբ՝ փա-
փաքելի է որ այդ գումարէն օգտուին,
կողկասի արկածեալները, Գանձակի
Հայկ. Բար. Միութիւնը եւ Թուր-
քիոյ այլ եւ այլ տեղերու բանտե-
րուն մէջ հեծեծող զժաղդ բան-
տարկեալները՝ որոց դառն կացու-
թեան անձին փորձով ծանօթացած է
Սրբազան Հեղինակը. Այս նուէրին
գործադրութեան եւ պրակներու ժամ
առաջ սպասման ջանալու համար
այժմէն պէտք է բանակցիլ Մասնա-
խմբայ Գարտուղար Տ. Եղիշէ Թու-
րքականին հետ .

ԿԱՆԽՈՒԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Երկարութիւնը համար 40 դր. ողջ է, իսկ
Արտասահմանի համար 42 ու կէս ֆր.
Իւրաքանչիւր պրակ մէկ դր. ողջ
կայծէ .

ԱՔՍՈՐԻ ԿԵԱՆՔՈՒՆ Վերաբերեալ
ամէն կարգի թղթակցութիւն. զրամ
եւ այլն, հարկ է ուղղել Մասնախմբի
Հաշուակալ-Գարտուղարի հասցէին՝
որ է Տիրար Է. Թորոսեան լը Քէր
(Եմիւրդ)

ԿԱՐԿԱԳԻՐ ՄԱՍՆԱՆՈՒՄԲ
Գահիրէ 10 Մարտ 1906
ԾԱՆՕԹ.— Ամերիկայի, Պուրկարիոյ,
եւ Կողկասի համար վստահելի գոր-
ծակալներու պէտքը կայ. Դիմել վե-
րագրեալ հասցէին .

Աքսորի կեանքին համար Մաս-
նախուժի կողմէ Թիւրքի համար
գործակալ անուանուած է Տիրար Ա-
ղէքսանդր Տէմիրճիպաշեանը :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ք Ո Ւ Ր Ք Ի Ա

Նէճիպ Մէլհամէ բաշայի խու-
զարկութիւնները բրեւան բերած
են, այն ինչ Շամիլ բաշան և
Ապտէլ Լէզաքը կառավարու-
թեան զէմ՝ նիւթուած դաւադ-
րութեան մը մասնակից են եղեր :
Սուլթանը, դատական յանձնա-
խումբ մը պիտի զրկէ Թրիբունլի,
ուր կը գտնուին աքսորեալները :
Ամենազգեցիկ իւրեմանն է Հէք-
Մէտին էֆէնտին պիտի նախա-
գահէ յանձնախմբին . Յանձնա-

խումբը արդէն ճամբայ ելած է
Յանձնախումբը իր հետ միասին
կը տանի քսանի շափ աքսոր-
եալներ և Բատվան բաշան սպան-
նողները :

Նէճիպ Մէլհամէ բաշայի երե-
ւան բերած դաւադրութեան վը-
րայ, քիւրտ խուզարարներու
զէմ խիստ միջոցներ ձեռք ա-
ռած են :

Կը կարծուի թէ հասարակ
քիւրտ բնակչութիւնը մօտ օրէն
Պօլսէն պիտի արտաքսուի, սա-
կայն բուռն զժուարութիւններու
պիտի բաղխի կառավարութիւնը :

Սուլթանի առաջին քոր-
տուղար Թախսին բաշան երեսէ
ինկած է : Սուլթանը Թախսինը
խստիւ յանդիմանած է, որովհե-
տեւ այս վերջինս միշտ կը հո-
վանաւորէր, քիւրտ Պէտրէամ
ընտանիքը, այս ընտանիքիս
պատկանողներէն շատերը հիմայ
աքսորուած են : Թախսին բաշան
վախէն, Սուլթանի ներկայութեան
միջոցին մարած է :

Թախսին բաշայի ամենակարող
գրութիւնը խախտած է :

Րատվան բաշան սպաննելէն
վերջ քիւրտերը մտադիր են ե-
ղեր զինուորական և հասարակաց
չինութիւններու նախորդները
ու այլ ազգեցիկ անձնաւորու-
թիւններ սպաննելու Շատ հաւա-
նական է ոչ քիւրտ մեծաւորները
մահուան դատապարտուին :

Պօլսէն կը հաղորդեն թէ՛
Շամիլ բաշայի կինը զինքը շըր-
հորը նետած ու խեղդուած է :

Քիւրտիսդանէն հասած լու-
րերը շատ տխուր են, և
ամենայն արագութեամբ Պօլսոյ
քիւրտ բնակչութեան մէջ կը
տարածայնուի : Այս լուրերը
քիւրտ մեծաւորներու աքսոր-
ուելէն իվեր տիրապետած յու-
զումը աւելի ևս կը քրքռեն :
Ստտիկանական խիստ միջոցներ
ձեռք առնուած են այս բնակչու-
թեան՝ քրիստոնեաներու ու

րիոս մը, ներոն մը կամ Գալիկուլա
մը կերեւակայէր :

Մագիչներու ձեռով կորցած մատ-
ներովը դատարկութիւնը կը պատա-
ռէր, երեւակայութեանը մը մէջ այն
պէս պատկերելով թէ կենդանի կի-
ներու միտք կը պատռէր, իր շըր-
թաւքները հրէշային համարողներու
կը միտէին, կարծիք ու արիւնահոս
վերքերէ արիւն ձծելով : Ախտածէտ
մարմնոյ մը մոլորեցնութեան այս շոր-
քաբուսին մէջ, զարհուրելի էր տես-
նել իր երկու գատարկ աչքերը, ա-
ռանց լոյսի կամ մտածման մը ցոլքին
իր երկու աչքերը որոնք մեռած էին
արդէն ու կընդլայնէին կարծացած
արտեւանուցներու շրջանակին մէջ :
Վերջապէս գետին զլտորեցաւ, ու իր
ձեռքերը շորթորը շոգափելով ու
ոստնելով սիրոյ որսեր կը փնտ-
ռէին . .

Ես, նախ, սարսափէն քարացած,
չէի շարժեր բնաւ : Գաղափարներս

մոլորած, անդամներս թուլցած,
յանկարծակի զժոխքին մէկ անկիւնը
նետուողի մը զգանութեամբ, կուզէի
փախչիլ : Վշտազին ծանրութիւն մը,
սակայն, զիս վար կը դնէր՝ ողբալի
ու զազիր այս դատապարտեալին առ-
ջեւ : Սակայն, երբ տեսայ հօրեղ-
բորս գետին թաւալիլը, սկսայ աղա-
ղակել ու օգնութեան կանչել, եւ
հօրեղբայրս վերցուցինք ու անկող-
նին մէջ անզաւորեցինք : Անկէ վերջ
այլեւս զիս հօրեղբորս սենեակը շտախի :

Հոգեւարքը երկու օր ալ տեւեց,
երկու տաճանելի օրեր, որոնք եր-
կու տարի տպաւորութիւնը ձգեցին
վրաս : Թէ ինչպէս չի խնթացայ
ես, չիտակը, չեմ գիտեր. անընդ-
հատ սարսափներու մէջ կապելի,
բանականութիւնս կը մոլորէր. զգա-
յարանացս ըմբռնողութիւնը չափա-
զանց բուռն ցցումներէ զրգուած,
աւրուեր էր. ամենահասարակ առար-
կաները սպաննական, անկանոն,

գերերկրային երեւոյթներ կ'զգենուին :
Երկրորդ օրուան վերջանալուն ա-
մէն ազմուկ դադրեցաւ, հօրեղբորս
ձայն ալ չէր լսուեր, ժամ մը ան-
ցաւ այսպէս, լուռութեան մէջ : Գիշե-
րը հասնելուն, զեղին փայլունու-
թիւն մը սկսաւ գրան ձեղքերէն ճա-
ռագայթել : Հայրս սենեակէն դուրս
ելաւ ու զիս կանչելով .


— Գնա, տղաս, հօրեղբորդ մնաս-
բարով ըսէ, միմիջեց :

Սենեակ մտայ, հօրեղբայրս կը
հանգչէր գլուխը բարձին, Դէմը ուղ-
ղաձիգ, սարսափելիօրէն զեղնած,
մարմինը անշարժ, պիտի ըսէիր թէ
կը քնանար : Երբեմն դող մը իր կը-
զակը ու ձեռքերը կը ցնցէր, հազիւ
թէ բաց բերնէն մեղծ ձայն մը կել-
լէր. պարպուող բաժակի մը ձայնին
նման : Անկողնին քով, մայրս, ծըն-
րադիր, կաղօթէր, կաղօթէր .

Ես մօտեցայ, սիրտս նուազած,
հօրեղբորս ճակտի համբոյր մը դրոշ-

մեցի, ու այդ կարճ երկվայրկեանին
միտքս եկաւ, տարօրինակ պայծա-
ռութեամբ մը, այս թշուառ էակին
ամբողջ կեանքը. այնօրէն՝ երբ դա-
սազրքերս առած պատէն անդին նե-
տած էր զարմանալի շարժումով մը,
մինչեւ այն վայրկեանը, երբ սենե-
կին մէկ անկիւնը կ'ծկուած էր. ա-
նաքօրէն մերկ : Հեծեծագին սկսայ
լալ : Մայրս վեր կեցաւ, մահամեր-
ձին ձեռքերը կուրծքին վրայ խալա-
ձեւեց, մատներուն միջեւ պղնձէ
փոքրիկ խաչ մը զեանդեց, յետոյ
սկսաւ աղօթել :

Հօրեղբայրս մեռած էր .
(Շարունակելի)



Թրքերու դէմ ընելիք յարձակման առաջը առնելու համար Սթանպուլի մէջ բնակող քիւրտերուն Գարագէտի կամարչէն Կալաթայ, ինչպէս նաեւ կալաթայի քիւրտերուն արգիլուած է Սթանպուլի կողմը անցնիլ: Քիւրտերուն խմբովին պատիւ արգիլուած է: Քիւրտ բնակչութիւնը կիմանայ թէ՛ Քիւրտիսդանի մէջ շատ ճնշում կը գործեն իրենց ցեղակիցներուն: Պիթիսի, Վանի, Խարբերդի, Տիգրանակերտի մէջ և ուրիշ տեղեր, թուրքերը ու հայերը ջարդեր են: Համիտիէ զօրախումբը այս ջարդերուն մասնակցած է: Քիւրտիսդանի քրդերը յայտարարած են՝ թէ աքսորեալները չը վերադարձնեն զաղթելու են Պարսկաստան և Ռուսիա: Կառավարական պաշտօնէն թիւնը զանոնք խաղաղեցնելու համար կը հաւաստէ եղբր թէ աքսորեալները տակաւին ծարտանէլէն անդին անցած չեն ու քիչ օրէն յետս կը դառնան: Զարդերու վայրը շուտափոյթ զինուոր ուղարկուած է Էրզրումի շրջորդը զօրաբանակէն: Խօսք կայ որ Համիտիէ զօրախումբը պիտի ցրուեն: Սակայն կը վախնան թէ՛ Քիւրտիսդանի մէջ եթէ այս որոշումը ի գործ գնեն, երկրորդ Մակեդոնիա մը կը դառնայ իրենց գլխին: Բ. Դուռը կը հաւաստէ թէ՛ շրջող լուրերը չափազանցուած են:

— Թրքապուլկարական վաճառականական զաշնակցութիւնը վերաքննելու պաշտօն ունեցող պատուիրակները յայտարարած են թէ, Ամսոյս 2-էն սկսած թուրք կառավարութիւնը, բոլոր ձեռք առնուած ճնշիչ միջոցները կը վերցնէ, ու ասկէ վերջը պուլկարական ապրանքը առաջուան պէս ազատ մարդ կուեննայ թուրքիոյ մէջ: ասկէ զատ թուրք կառավարութիւնը, պուլկարական իշխանութեան կարտօնէ ամէն պահպանողական շարժումը ձեռք առնել իր սահմանազխէն ետ վերադարձնել տաճկական կենդանիները, երբ որ անոնք վարակուած են:

— Ափրիկէի Զատ լճին եզերքը Ծրանսայի ըրած զինուորական շարժումները, Բ. Դրան կասկած ներշնչած է: Նա հրաման տուած է Մաս քաղաքը գրաւել, Բ. Դուռը կը պնդէ թէ այդ վայրերը թուրքիոյ կը պատկանին: Այս որոշումը զինուորական կուսակցութիւնը ըրած է՝ ներկայ յարուցուած հարցով թուրքիան նոր գոյնարութիւններ կը ստեղծէ, համահաւասար Պարսկական, Եգիպտական և Անգլիական նմանօրինակ վիճելի հարցերու:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Բէնէնգամբի տնօրինու

Թեանց համաձայն Զսպայդալեան նահանգի կառավարիչ ու զինուորական հրամանատար Գոյչէվնի գող ձերբակալուած է, որով հետեւ յեղափոխականներու համակարծիք է, նա խօսք տուած է յեղափոխականներու, եթէ երբէք առժամանակեայ յեղափոխական կառավարութիւն մը ստեղծուի, իր հրամանատարութեան տակ գտնուող զօրքերը անոր տրամադրութեան տակ կը դնէ:

— Թիֆլիզէն կիմացնեն:

Զատկին օրը զինուորները ժողով մը ունեցան ուր քաղաքական ճառեր արտասանուեցան: Հարիւրի մը շափ խռովարարներ ձերբակալուեցան սակայն Մանկ ընթաց զօրաբունքը ապստամբեցաւ, և այս զօրագնդէս երկու ջոկատ միայն բանտին վրայ յարձակեցան և ուղեցին ձերբակալուած խռովարարները ազատելու Երկուստեք հրացանաձգութիւն տեղի ունեցաւ, երկու կողմէն ալ շատ մը մեռեալ ու վիրաւոր կայ:

— Բեթերպուրկէն կիմացնեն թէ՛ Վիթէն, Տուրնովոյի պաշտօնանկ ըլլալը պահանջած է, իսկ ծարր մեթած: Այսու հաստատուր կը շրջի թէ՛ Տուրաի գումարուելէն առաջ Վիթէն և կամ Տուրնովոն նախարարի պաշտօնէ պիտի հեռանան:

— Երեւելի ոռոս գրագէտ Մաքսիմ Կորքին քանի մը օրէ ի վեր նիւ-Նորք կը գտնուի, առջի օրեր նա համակրալից ցոյցերու առարկայ էր դարձած, իսկ այսօր Ամերիկեան բարոյականութիւնը զանի ամենայն խստութեամբ կը հալածէ:

Տեղւոյն բնակչութիւնը կիմանայ թէ՛ Կորքին որպէս օրինաւոր կիւնը կը ներկայացնէ իր սիրուհին, գերասանուհի Անտրէէվան: զոր իր հետն է: Այս վերջինս տեղւոյս հասարակութենէ կը հայածուի, և արդէն Երկու անգամ զինքը պանդոկէն վաճառած են, այսպէս Կորքին կը պարտաւորի մասնաւոր տուն վարձել: Կը հաւաստեն թէ՛ Կորքին իր ստայոգ յայտարարութեան համար Ամերիկայէն պիտի վաճառուի, գաղթային օրինաց համաձայն: Կորքին այս գոյնարութիւնները, ոռոսական գաղտնի ոստիկանութեան գործակատարներու ազդեցութեան կը վերագրէ, որոնք զինքը կը հալածեն ամերիկեան բարոյականութեան խստութիւններէ աւելի:

Տուրաի մէջ արտասանուելիք ճառերը ընդմիջելու համար կառավարութիւնը օրինագիծ մը կը պատրաստէ: Նիստերը երկու օրը անգամ մը պիտի ըլլան: Պաշտօնեաներէ կազմուած յանձնախումբ մը Գորմանիոյ, Աւստ

րիոյ և Անգլիոյ մէջ կուսումնասիրէ այն միջոցները որով կարելի է ոչնչութեան վերածել Երեսփոխանական ընդդիմադրութիւնը:

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Ալմէզլիբասի համաժողովէն ետքը, գերմանական մամուլը առիթ չի փախցնէր իտալական կառավարութեան վրայ յարձակելու: «Նէօյոյէ Նախրիստէն» լրագիրը գոհունակութիւն կը յայտնէ թէ հասարակական կարծիքը, ու է պաշտօնական հոմակալներ մը ցոյց տուած չէ՛ Վէլլիֆի իտալիոյ բնակչութեան պատճառած աղէտի մասին, միայն «Պորվէրաց» զարմանք կը յայտնէ թէ՛ ինչպէս կառավարութիւնը դրդած է մամուլը չարամտութեամբ յարձակիլ կառավարութեան մը դէմ, որ պաշտօնապէս իր նիշակակիցն է:

Այս գերմանական շարամիտ յարձակումներու ժամանակ, գերմանական կայսրը, Աւստրո-Հունգարիոյ արտաքին գործոց նախարար Կոլուխովսքիի հետեւեալ հեռագիրը կը քաշէ:

«Այն վայրկեանին, երբ ձեր գամենադրամած տիրոջ հաճութեամբ կսմս Վէլլիզէսու Հայմպի կը խրկեմ ՚կարմիր արծիւի» մեծ պատուանշանը, առ ի նշան երախտագիտութեան անոր Ալմէզլիբասի մէջ գոյց տուած արգիւնաւէտ ճիգերուն, պարտաւորուած եմ բոլոր սրտանց ձեզի յայտնել իմ շնորհակալութիւնը, ձորդ աներկբայ ձեռնտուութեան համար:

Գոյք շատ լաւ կը ցար պաշտպաննէլ ձեր դիրքը, կը հաւաստեմ ձեզ թէ նմանօրինակ պարագայի մը մէջ դուք եւս կրնաք իմ վրայ վստահիլ:

Անգլիա

Անգլիոյ թագաւորը Գոյֆու (Յունաստան) հասած է. քաղաքապետին արտասանած բարեգալտեան ճառի ի պատասխան թագաւորը ըսած է թէ՛ Անգլիոյ և Յունական ազգերու իրարու անդէպ համակրանքի զգացումները ամենուր յայտնի է, և նա իր անձը բարեբաղդ կը համարէ որ կը ցած է այցելութիւն մը տալ զեզեցիկն Յունաստանի:

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Ներկայ կառավարութեան ըրած տնօրինութիւններու համաձայն, քաղաքական ժողովներ դուրսբլ վերստին արտօնուած է: Թայէրվարիի օրով, թագաւորը ամբաստանողներու դէմ, կառավարութեան կողմանէ բացուած գատերը, արդի իրաւարարութեան նախարարը շրջաբա

ր կանոն մը կը փակէ առ յաւետ նախկին ազատական իրաւունքները կը վերագործնեն քաղաքացիներու: Թագաւորը մայիս 2-ին Պուտաբէշտ պիլի երթալ հանդիսաւոր կերպով Երեսփոխանական ժողովը բտնալու համար:

Շատ մը քաղաքներու մէջ հակամահառական ցոյցեր տեղի կունենան:

ԱՄԵՐԻԿԱ

Ամերիկեան Միացեալ Նահանգներու հասարակապետութեան նախագահ Րուզվէլթը, իր արտասանած ճառի մէջ, կռիւ կը յայտարարէ միլիառատէրերու դէմ: Կը կարծուի թէ ամերիկեան կառավարութիւնը ժառանգական օրէնք մը պիտի տալարկէ, որով կը սահմանուի ժառանգուելիք հարստութեան քանակութիւնը:

— Սանֆրանչիսքոյի մէջ ամսոյս 5-ին ահաւելի երկրաշարժ մը տեղի ունեցած է, որ գրեթէ բոլորովին հիմնայտակ ըրած է քաղաքը. հազարաւոր մեռածներ կան:

Հազորակցութիւնները ընդհատուած են բոլորովին:

Ս Ո Ւ Ր Ը

Ա մ ս ա գ ի ր
Գրական, Հասարակական եւ
Քաղաքական
Բ ա ժ ն և գ ի ն ը
Արտասանմանի համար տարեկան
12 րուպիի Վեցամսեայ 7 րուպիի
Հասցէ՝ Ր է տ ա ք ս ի օ ն տ ր լ ա
ր ը վ ի ը Մ Ո Ւ Ր Ը
(Կովկաս) Թ Ի Ֆ ի Զ

ԲԱԶՄԱՎԷՊ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Ա Ս Ս Ա Գ Ի Ր

Գրական, Բանասիրական, Պատմական, Կրթական և Գիտական
63 րդ. ՏԱՐԻ
Հ ա տ ո ր Կ Գ .
Տարեկան Բաժնեգրին է 40 Ձր.
Գ ի մ ե լ Ր է տ ա ք ս ի օ ն տ ր լ ա
ր ը վ ի ը Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ Ս . Լ ա -
զ ա ր Վ Է Ն Ի Ս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

«Ներխուսարգ Հայաստանի ապարանը Պոսթօնէն Նիւ-Եօք փոխադրուած ըլլալով կը խնդրենք մեր թղթակիցներէն, գործակալներէն եւ բաժանորդներէն, որ այսուհետեւ նախկին հասցէով ո՛չ մի գրութիւն չուղարկեն, այլ զրկեն մեր հետեւեալ նոր հասցէով:—

«Ներխուսարգ Հայաստան» 196, Բ. Օ. Պօքս, Մ. Ս. 310, 4-դ հ Ավրնիւ Նիւ Եօք—Սիդի

Печатница на П. Глушковъ С-ве Вар.